«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-Ի ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՏՈՅՈՏԱ ԿՈՐՈԼԼԱ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/56

«28» 10 2021

ք. Երևան

թ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վալս Գրուպ>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Գ. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավտոմոբիլային պարկի Տոյոտա Կորոլլա ավտոմեքենայի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը՝ 1130000 (մեկ միլիոն հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՄԳ = 1500000 ՀՀ դրամ

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է

ՆԳ = 5770400 ՀՀ դրամ

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	Վալս Գրուպ ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3	ք. Երևան, Ֆուչիկի փ. 2 նրբ 5շ, բն39
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ	Արմսվիս բանկ
Հ/Հ 2473600002170010	Հ/Հ 25000010562340100
ՀՎՀՀ 02205028	ՀՎՀՀ 01264211
գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան	տնօրեն _____ Գ. Մկրտչյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/56 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	50111110	Տոյոտա Կորոլլա Գազ 1.6 /Toyota Corolla 1.6 GAS/ իր մոդիֆիկացիաներով /մարդատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ - 1հատ Տեխնիկական բնութագիրը ներկայացված է N1.1 հավելվածում	դրամ	1130000	1	ք. Երևան, Արցախի փողոց 4-րդ նրբանցք, հ 14	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներ ի և պարտա-կանություն-ների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օր անց 1 տարի ժամկետով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Վալս Գրուպ ՍՊԸ
ք. Երևան, Ֆուչիկի փ. 2 նրբ 5շ, բն39
Արմսվիս բանկ
Հ/Հ 2500010562340100
ՀՎՀՀ 01264211

տնօրեն _____ Գ. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավել ված 1.1

Պահեստամասեր և սպասարկման ծառայություններ		ԱՎՏՈՄԵԽԱՆԻԿԱ	
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		Վազք կմ (պարբերակա նություն)	Toyota Corolla 1.6 GAS NMTBB4JE20R238416 1 հատ Մեկ միավորի գին 1 130 000 ՀՀ դրամ
1.	Շարժիչի յուղի և զտիչի փոխարինում	7,000 կմ	Անվճար
2.	Օդի զտիչի փոխարինում	14,000 կմ	Անվճար
3.	Սրահի օդի զտիչի փոխարինում	14,000 կմ	Անվճար
4.	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	80,000 կմ	12000
5.	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	80,000 կմ	12000
6.	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ/տ	100,000 կմ	5000
7.	Փոխ.տուփի յուղի փոխարինում, քարտերի /մաքրում	60,000-80,000 կմ	18000
8.	Փոխ.տուփի յուղի ավելացում	-	Անվճար
9.	Փոխ.տուփի զտիչի փոխարինում	60,000-80,000 կմ	Անվճար
10.	Առջևի արգելակման կոճղակի փոխարինում	-	7000
11.	Հետևի արգելակման	-	7000

	կոճղակի փոխարինում		
12.	Ձեռքի արգելակման կոճղակների փոխարինում	-	-
13.	Շարժիչի հովացման հեղուկի փոխարինում	100,000 կմ-150,000 կմ	15000
14.	Շարժիչի հովացման հեղուկի ավելացում	-	Անվճար
15.	Արգելակման համակարգի հեղուկի փոխարինում	40,000 կմ	15000
16.	Արգելակման հեղուկի ավելացում	-	Անվճար
17.	Արգելակման համակարգի կարգավորում, օդահանում	-	15000
18.	Երկեղջյուրի փոխարինում	-	15000
19.	Կայունարարի վռանների փոխարինում	-	7000
20.	Կայունարարի կանգնակի փոխարինում	-	7000
21.	Անվաբացքի կարգաբերում (ռազվալ)	-	13000
22.	Անվադողերի փոխարինում	-	13000
23.	Անվադողերի	-	10000

	բալանսավորում		
24.	Էլեկտրական տվիչների հաղորդալարերի նորոգում շարժիչի հատվածում	-	20000
25.	Դռան հաղորդալարերի նորոգում	-	20000
26.	Տանիքի հաղորդալարերի նորոգում	-	160000
27.	Ցուցիչների վահանակի էլեկտրալարերի նորոգում	-	170000
28.	Գեներատորի նորոգում	-	150000
29.	Հեռահար լամպի փոխարինում	-	Անվճար
30.	Մոտակա լամպի փոխարինում	-	Անվճար
31.	Հակամառախուղա յին լամպի փոխարինում	-	Անվճար
32.	Արգելակի լամպի փոխարինում	-	Անվճար
33.	Արգելակման սկավառակի հղկում (զույգը)	-	18000
34.	Գեներատորի փոկի փոխարինում	100,000 կմ	14000
35.	Օդորակիչի լիցքավորում	-	30000
36.	Կիսասռնու դրսի կամ ներսի փոշեթիկնոցի փոխարինում	-	18000

37.	Մետաղաձողի փոխարինում	-	15000
38.	Շարժիչի առջևի բարձիկի փոխարինում	-	8000
39.	Շարժիչի հետևի բարձիկի փոխարինում		15000
40.	Շարժիչի ձախ կամ աջ բարձիկի փոխարինում	-	15000
41.	Ձեռքի արգելակման կոճղակների կարգաբերում	-	5000
42.	Տեխ. զննում	-	5000
43.	Դիագնոստիկա	-	5000
44.	Անիվի մանեկի փոխարինում	-	5000
45.	Կիսասոնու փոշեթիկնոցի փոխարինում	-	18000
46.	Անիվի ճնշման տվիչի փոխարինում	-	5000
47.	Անիվի ճնշման տվիչի ծրագրավորում	-	15000
48.	Բանալիի ծրագրավորում	-	15000
49.	Արգելակման սուպորտների նորոգում	-	45000
50.	Առջևի հարվածամեղմիչի փոխարինում	-	16000
51.	Հետևի հարվածամեղմիչի փոխարինում	-	16000

52.	Հարվածամեղմիչի թասակի փոխարինում	-	16000
53.	Հարվածամեղմիչի պատյանի փոխարինում	-	16000
54.	Գնդաձև հոդակապի փոխարինում	-	8000
55.	Արգելակման սկավառակի փոխարինում	-	15000
56.	Ղեկային կալունի փոխարինում	-	80000
57.	Ղեկի ձողի փոխարինում	-	25000
58.	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	-	25000
59.	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	-	30000
60.	Կիսաառնու փոխարինում	-	18000
61.	Կիսաառնու խցուկի փոխարինում	-	18000
62.	Ղեկային ձգաձողի դրսի ծայրակալի փոխարինում	-	8000
63.	Ղեկային կալունի ներսի պատյանի փոխարինում	-	10000
64.	Անվաբռունցքի փոխարինում	-	50000
65.	Վառելիքի պոմպի փոխարինում	-	12000

66.	Մեկնարկիչի փոխարինում	-	25000
67.	Գեներատորի փոխարինում	-	25000
68.	Ջրի մղիչի փոխարինում	-	25000
69.	Վառոցքի կոճի փոխարինում	-	5000
70.	Օդի համակարգի լվացում	-	5000
71.	Մարտկոցի էլ. ամրակների մաքրում	50,000	5000
72.	Ղեկային մեխանիզմի փոխարինում	-	40000
ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ		**Վազք կմ (սպարբերաբար)**	
1.	Փոխանցման տուփի յուղ 1լ	60,000-80,000 կմ	11000
2.	Փոխանցման տուփի զտիչ 1 հատ	-	38000
3.	Փոխանցման տուփի միջադիր 1 հատ	-	7000
4.	Շարժիչի յուղի զտիչ 1 հատ	-	3500
5.	Շարժիչի յուղ 5w30 սինթետիկ 1լ	7000 կմ	4300
6.	Շարժիչի հովացման հեղուկ 1լ	100,000 կմ	5000
7.	Արգելակման հեղուկ 1լ	40,000 կմ	6000
8.	Հեռահար լամպ 1 հատ	-	10000

Հավել ված 1.1

9.	Մոտակա լամպ 1 հատ	-	11000
10.	Հակամառախուղա յին լամպ 1 հատ	-	11000
11.	Առջևի արգելակման կոճղակ 1 կ/տ	15000-20,000 կմ	42000
12.	Հետևի արգելակման կոճղակ 1կ/տ	30,000-35,000 կմ	24000
13.	Գեներատորի փոկ 1 հատ	80,000-90,000 կմ	17000
14.	Վառելիքի զտիչ 1 հատ	40,000 կմ	82000
15.	Օդի զտիչ 1 հատ	14,000 կմ	7000
16.	Սրահի օդի զտիչ 1 հատ	20,000 կմ	10000
17.	Վառոցքի մոմ 1հատ	70,000-80,000 կմ	8000
18.	Երկեղջյուր 1 հատ	-	92000
19.	Առջևի կայունարարի վռան 1 հ ատ	-	15000
20.	Հետևի կայունարարի վռան 1 հ ատ	-	-
21.	Առջևի կայունարարի կանգնակ 1 հ ատ	-	42000
22.	Հետևի կայունարարի կանգնակ 1 հ ատ	-	-
23.	Ինժեկտորի մաքրման հեղուկ 1 հատ	20,000կմ	10000
24.	Ձեռքի արգելակման կոճղակ 1կ/տ	60,000 կմ	24000
25.	Արգելակման	-	3000

	լապտերի լամպ 1 հատ		
26.	Կիսաասոնու փոշեթիկնոց դրսի 1կ/տ	-	49000
27.	Կիսաասոնու փոշեթիկնոց ներսի 1կ/տ	-	30000
28.	Ապակեմաքրիչի ռետին 1 հատ	-	13000
29.	Մետաղաձող 1 հատ	-	-
30.	Շարժիչի առջևի բարձիկ 1 հատ	-	43000
31.	Շարժիչի հետևի բարձիկ 1 հատ	-	63000
32.	Շարժիչի բարձիկ աջ 1 հատ	-	106000
33.	Շարժիչի բարձիկ ձախ 1 հատ	-	72000
34.	Շարժիչի կարտերի տափօղակ 1 հատ	7000 կմ	600
35.	Անիվի մանեկ և հեղյուս 1 հատ	-	7000
36.	Հեռակառավարմա ն վահանակ (բանալի) 1հ	-	188000
37.	Արգել. սուպորտի նորոգման հավաքածու 1հ	-	50000
38.	Առջևի հարվածամեղմիչ 1 հատ		52000
39.	Հետևի հարվածամեղմիչ 1 հատ		40000
40.	Առջևի հարվածամեղմիչի		15000

Հավել ված 1.1

	պատյան 1 հատ		
41.	Հետևի հարվածամեղմիչի պատյան 1 հատ		20000
42.	Առջևի հարվածամեղմիչի թասակ 1 հատ		58000
43.	Գնդաձև հոդակապ 1 հատ		33000
44.	Առջևի արգելակման սկավառակ 1 հատ		40000
45.	Հետևի արգելակման սկավառակ 1 հատ		35000
46.	Ղեկային կալուն 1 հատ		480000
47.	Ղեկի ձող 1 հատ		125000
48.	Առջևի անվակունդի առանցքակալ 1հատ		150000
49.	Հետևի անվակունդի առանցքակալ 1 հատ		188000
50.	Ղեկային մեխանիզմ 1 հատ		512000
51.	Կիսաառնի 1 հատ		375000
52.	Կիսաառնու խցուկ 1հատ		10000
53.	Ղեկային ձգաձողի դրսի ծայրակալ 1 հատ		42000
54.	Ղեկային կալունի ներսի պատյան 1 հատ		17000
55.	Անվաբռունցք 1 հատ		150000

Հավել ված 1.1

56.	Վառելիքի պոմպ 1 հատ		204000
57.	Մարտկոց 1 հատ		65000
58.	Մեկնարկիչ 1 հատ		207000
59.	Գեներատոր 1 հատ		275000
60.	Ջրի մղիչ 1 հատ		58000
61.	Վառոցքի կոճ 1 հատ		80000
	Ընդամենը		**5770400**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Վալս Գրուպ ՍՊԸ
ք. Երևան, Ֆուչիկի փ. 2 նրբ 52, բն39
Արմսվիս բանկ
Հ/Հ 2500010562340100
ՀՎՀՀ 01264211

տնօրեն _____ Գ. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/56 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
1	50111110	Տոյոտա Կորոլլա Գազ 1.6 /Toyota Corolla 1.6 GAS/	Վճարումը կկատարվի ծառայությունը մատուցելուց հետո ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում	Ընդամենը 100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
ՀՀ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրեն _____ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Վալս Գրուպ ՍՊԸ
ք. Երևան, Ֆուչիկի փ. 2 նրբ 52, բն39
Արմսվիս բանկ
ՀՀ 2500010562340100
ՀՎՀՀ 01264211

տնօրեն _____ Գ. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-21/56 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » *20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն